ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/17

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ի կողմից 06.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.02.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

« Բողոքի նախապատմությունը և փաստերը.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Պահապան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերումը (այսուհետ նաև՝ ծառայություն):

Հրավերով նախատեսված ծառայության մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները՝ տվյալ գործունեությամ համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիցենզիաներ կամ նշված գործունեությունն իրականացնելու իրավասություն:

«Պահապան» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է «մասնավոր պահնորդական գործունեության իրականացման» լիցենզիա:

Հրավերի 7.10-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել՝

ա. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

բ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

գ. նույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Հրավերի 7.17-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցում սահմանված է եղել հետևյալը՝ պահակակետերի վերահսկողության տակ է գտնվում 46954.19 քմ կազմող շենք-շինություններ և 49836.15 քմ հողատարածք: Անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն ծառայողական զենքով՝ առանց հանգստյան և տոնական օրերի Կատարողը տարածքի անվտանգությունը և պահպանությունը պահակակետում պետք է ապահովի աշխատակցի պարտադիր ներկայությամբ՝ 24 ժամյա ռեժիմով (ներառյալ ոչ աշխատանքային և տոն օրերը): Ծառայությունը մատուցվելու է 4 տարբեր պահակակետերում: Աշխատակիցների ընտրությունը պետք է նախապես համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում և ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար

անհրաժեշտ միջոցներով: Ծառայություն իրականացնող բոլոր պահնորդներին անհրաժեշտ է հանդերձավորել համապատասխան արտահագուստով (գարուն-ամառ, աշուն-ձմեռ): Աշխատակիցները պետք է լինեն 25-45 տարեկան: Աշխատակիցը պետք է ունենա ձեռքի լապտեր՝ գիշերային ժամերին շրջայցների համար նախատեսված և անհրաժեշտ լուսավորություն ապահովող, ռետինե մահակ և ծառայողական զենք, ինչի համար պետք է անցած լինի հատուկ ուսուցում և ունենա այն կրելու իրավունք,պետք է տիրապետի առաջին բուժօգնության կանոններին, տիրապետի տեսահսկման համակարգերի շահագործման կանոններին: Յուրաքանչյուր օր անհրաժեշտ է.

- իրականացնել հերթապահություն /ներառյալ տեսահսկման և հակահրդեհային ահազանգման համակարգերի միջոցով/,
- իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն,
- կանխել խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,
- արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքում /հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն, խուլիգանական հարձակումներ և այլն/ կատարելով նաև անհրաժեշտ ահազանգեր, ինչպես նաև 3-5 րոպեի ընթացքում հատուկ նշանակության խմբեր ուղարկել պահպանվող օբյեկտ,
- արգելել կողմնակի անձանց մուտքը,
- անհրաժեշտության դեպքում ապահովել բուժաշխատողների անվտանգությունը,
- իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ,
- հետևել շենքի դիմահայաց ավտոկայանատեղիի սահմանված կարգի պահպանմանը,

ապահովել աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը /ներառյալ տեսահսկման համակարգերը /,

- ամենօրյա շրջայց կատարել շենքի ներսում՝ աշխատանքի ավարտից հետո:

Հատուկ նշանակության խմբերի միջոցով իրականացնել շուրջօրյա ստուգայցեր պահպանվող տարածքի անվտանգությունը էլ ավելի հուսալի դարձնելու համար: Կատարողը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին:

Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են Կատարողի կողմից:

Գնային առաջարկը պետք է ներառի 4 պահակակետի ամսեկան վճարները»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 22.01.2019թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Պահապան» ՍՊԸ-ն դիմել է «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է Հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որոնցում նկատվել են հետևյալ թերությունները. կցված չեն զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունը:

«Պահապան» ՍՊԸ-ն 22.01.2019թ., ի պատասխան Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի շտկման պահանջի, հայտնել է հետևյալը.

««Պահապան» ՍՊԸ-ն 2019 թվականի հունվարի 10-ին կայացած «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքում ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Հրավերով սահմանված կարգով ներկայացվել են որակավորման փաստաթղթեր, որից հետո ձեր կողմից ներկայացվել է շտկման պահանջ՝ զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները ներկայացնելու վերաբերյալ, որոնք ներառված չեն հրավերով սահմանված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի շարքում: Հարկ ենք համարում նաև նշել, որ հրավերում նախատեսված պայմանագիրը ընդամենը նախագիծ է, և նախագծով առաջնորդվելը օրինաչափ չէ: Միևնույն ժամանակ, ինչ վերաբերում է հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի հավելված հանդիսացող տեխնիկական բնութագրի պահանջին, այն է՝ «անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն ծառայողական զենքով», ապա տեղեկացնում ենք, որ մեր ընկերության տիրապետման տակ են գտնվում ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ծառայողական զենք հանդիսացող «MAKAROV» mp-654K կարճ ակոսափող օդաճնշիչ զենքեր, էլեկտրոշոկեր, ռետինե մահակներ և այլն, որոնց ձեռքբերման և օգտագործման համար լիցենզիա և թույլտվություն անհրաժեշտ չեն: Ելնելով վերոգրյալից՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվում է երկկողմ կնքված պայմանագրի առկայության դեպքում իրականացնել պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ծառայություն. նշված ծառայությունը պատշաճ չիրականացնելու դեպքում կարող եք լուծարել պայմանագիրը»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 24.01.2019թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«Պահապան» ՍՊԸ-ն դիմել է «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է Աճուրդի մասնակցության Ընկերության որակավորման փաստաթղթերը, որոնցում նկատվել են հետևյալ թերությունները. շտկումն իրականացված չէ, ինչի արդյունքում Ընկերության հայտը՝ թիվ 1 չափաբաժնի մասով, մերժվել է:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 7.10-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել՝

ա. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

բ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

գ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Հրավերի 7.17 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Պահապան» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին:

Հրավերի 7.10-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ Աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Պահապան» ՍՊԸ-ին, ուղարկել է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը, ինչը Ընկերության կողմից կատարվել է:

Այնուհետև, էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է Հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որոնցում հանձնաժողովը արձանագրել է հետևյալ թերությունները. կցված չեն զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները:

Վերոհիշյալի հիման վրա, գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի պահանջներով՝ առաջարկել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունը:

Ի պատասխան նշված ծանուցմանը՝ Ընկերությունը ներկայացրել է դիրքորոշում գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ պահանջի իրավաչափության վերաբերյալ: Սակայն, նշված պարզաբանումից հետո, այնուամենայնիվ, «Պահապան» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ գնահատող հանձնաժողովը գտել է, որ Ընկերության որակավորման փաստաթղթերում շտկումն իրականացված չէ:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Պահապան» ՍՊԸ-ն սահմանված կարգով ներկայացրել է Հրավերի 7.10-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, տվյալ դեպքում՝ հրավերով պահանջված «Մասնավոր պահնորդական գործունեության իրականացման» լիցենզիա: Ինչ վերաբերում է գնահատող հանձնաժողովի կողմից պահանջվող զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները, ապա գտնում ենք, որ նման թույլտվությունները ներկայացնելու պահանջը իրավաչափ չէ, քանզի Հրավերում բացակայում է որևէ պահանջ (մասնավորապես, Հրավերի 7.10-րդ կետի 3-րդ ենթակետում), որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ցանկում պետք է ներկայացվի զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները:

Պետք է նշել, որ Աճուրդի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ընդամենը սահմանված է եղել, որ անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն ծառայողական զենքով, ինչը բացարձակապես չի նշանակում, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ցանկում պետք է ներկայացվի նաև զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները:

Բացի այդ, թե Կարգի 47-րդ կետը, և թե Հրավերի 7.17 կետի 2-րդ ենթակետը հստակ սահմանում են, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում միայն հանձնաժողովի

քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մինչդեռ վերոշարադրված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այստեղ չէր կարող արձանագրվել անհամապատասխանություն Հրավերի պահանջների նկատմամբ, քանզի ինչպես նշվեց, զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվություն ներկայացնելու պահանջ Հրավերը չէր պարունակում: Ուստի և տվյալ դեպքում կիրառելի չէին Կարգի 47-րդ կետի և Հրավերի 7.17-րդ կետի 2-րդ ենթակետի իրավակարգավորումները:

Պետք է նշել, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ.Անանյանի կողմից 18.07.2018թ. կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2018/101 որոշմամբ նմանատիպ իրավիճում նույնպես արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից չի կարող պահանջվել ներկայացնել հրավերով որպես որակավորման չափանիշը հիմնավորող չնախատեսված փաստաթղթեր և նման պահանջ ներկայացնելը ոչ իրավաչափ է և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Այդ մասին հայտնել է նաև Ընկերությունը՝ գնահատող հանձնաժողովին ուղղված 22.01.2019թ. գրությամբ, որով մասնավորապես հայտնվել է՝ ինչ վերաբերում է հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի հավելված հանդիսացող տեխնիկական բնութագրի պահանջին, ապա «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվում է երկկողմ կնքված պայմանագրի առկայության դեպքում իրականացնել պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ծառայություն. նշված ծառայությունը պատշաճ չիրականացնելու դեպքում կարող եք լուծարել պայմանագիրը»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը մերժելով «Պահապան» ՍՊԸ-ի հայտը՝ գործել է ոչ իրավաչափ, ինչը հանգեցրել են Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 47-րդ կետի և Հրավերի 7.17 կետի 2-րդ ենթակետի պահանջների խախտմանը:

Ավելին, նման պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից թույլտված ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով Պատվիրատուն ստիպված կլինի կնքել պայմանագիր հաջորդաբար տեղ զբաղեցրած ավելի բարձր գին առաջարկած մասնակից հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ.

1. Պարտավորեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմկերպված «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու «Պահապան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2.Պարտավորեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմկերպված «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ «Պահապան» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված (հաղթող) մասնակից»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էիր Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Զոհրակ Սողոմոնյանը, Էլադա Մելքումյանը, Հասմիկ Ենգոյանը, Արթուր Պարանյանը:

2. <u>«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ի կողմից 08.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 13.02.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պահապան» ՍՊ ընկերությունը իր կողմից ներկայացված բողոքում նշել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) գործել է ոչ իրավաչափ, ինչը հանգեցրել է Գնումների մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմանը:

Նշվածը չի համապատասխանում իրականությանը և անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

«Պահապան» ՍՊ ընկերությունը նշել է, որ Հրավերում բացակայել է զենք կրելու թույլտվության լիցենզիան և աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները ներկայացնելու պահանջը, հետևաբար իրավաչափ չէ առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջել ներկայացնել չնախատեսված փաստաթղթեր, այս դեպքում՝ թույլտվությունները և լիցենզիան: Մինչդեռ, անհրաժեշտ է նկատել, որ նույն Հրավերում նշվել է, որ անհրաժեշտ է ներկայացնել օրենքով սահմանված լիցենզիաները, իսկ տեխնիկական առաջարկում հստակ սահմանվել է, որ պահնորդական ծառայությունն իրականացվելու է ծառայողական զենքով և աշխատակիցը պետք է ունենա ծառայողական զենք կրելու իրավունք:

Հետևաբար, զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները չի կարող դիտարկվել չնախատեսված փաստաթուղթ:

«Պահապան» ՍՊ ընկերությունը որպես որակավորման փաստաթուղթ ներկայացրել է մասնավոր պահնորդական գործունեության իրականացման լիցենզիա, սակայն զենք կրելու թույլտվության լիցենզիա չի ներկայացրել: Մինչդեռ, նշված էլեկտրոնային աճուրդի տեխնիկական առաջարկում հստակ նշվել է, որ ...Աշխատակիցը պետք է ունենա .... ծառայողական զենք, ինչի համար պետք է անցած լինի հատուկ ուսուցում և ունենա այն կրելու իրավունք...:

Նշվածից ակնհայտ է դառնում, որ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխանելու նպատակով անհրաժեշտ է ունենալ ծառայողական զենք և այն կրելու թույլտվություն, իրավունք, որը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ:

Նշված տեխնիկական բնութագրից հստակ բխում է, որ պահնորդական գործունեություն իրականացնող անձը պետք է ունենա ծառայողական զենք, իսկ ծառայողական զենքը պահելու և կրելու համար տրվում է համապատասխան լիցենզիա:

Հետևաբար, ծառայողական զենքը պահելու և կրելու համար օրենքով սահմանված լիցենզիան անհրաժեշտ է եղել ներկայացնել մասնակցի կողմից:

«Զենքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական և ծառայողական զենք և դրանց փամփուշտները պահել թույլատրվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում զենք պահելու կամ պահելու և կրելու թույլտվություն ստացած իրավաբանական անձանց ու քաղաքացիներին՝ սահմանված կարգով:

Նշվածից հետևում է, որ զենք պահելու և օգտագործելու թույլտվությունը տրամադրվում է ՀՀ ոստիկանության կողմից: Հետևաբար, «Պահապան» ՍՊ ընկերությունը առնվազն պետք

է ներկայացներ ՀՀ ոստիկանության կողմից տրված համապատասխան թույլտվությունը զենք պահելու և օգտագործելու վերաբերյալ:

«Պահապան» ՍՊ ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը և վերջինս շտկման նպատակով հայտնել է, որ իրենց տրամադրության տակ են գտնվում MAKAROV mp-654K տեսակի «ծառայողական» զենքեր, որոնց ձեռքբերման և օգտագործման համար լիցենզիա և թույլտվություն անհրաժեշտ չեն:

Ծառայողական զենքի հասկացությունը տրված է «Զենքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով: Մասնավորապես նշված հոդվածով սահմանվում է հետևյալը.

«Ծառայողական զենքի շարքին է դասվում այն զենքը, որը նախատեսված է պետական մարմինների պաշտոնատար անձանց և իրավաբանական անձանց աշխատողների օգտագործման համար, որոնց օրենսդրությամբ թույլատրվում է պահել, կրել և օգտագործել այդ զենքը՝ ինքնապաշտպանության կամ օրենքով նրանց վրա դրված՝ քաղաքացիների կյանքի, առողջության, սեփականության պաշտպանության, բնության, բնական պաշարների, արժեքավոր և վտանգավոր բեռների, հատուկ թղթակցության պահպանության պարտականությունների կատարման համար:

Ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները, որոնց վրա օրենսդրությամբ դրված են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են ծառայողական զենք օգտագործելու կամ գործադրելու հետ, համարվում են հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք:

Ծառայողական զենքի շարքին է դասվում ոչ ավելի, քան 300 ջոուլ փողային էներգիայով ողորկափող, կարճ ակոսափող, ինչպես նաև երկար ողորկափող հրազենը, որի փամփուշտներն իրենց տեսակով և չափերով տարբերվում են մարտական զենքի փամփուշտներից, իսկ գնդակի և պարկուճի վրա թողած հետքով՝ քաղաքացիական զենքից, և որն իր կառուցվածքով զուրկ է կրակահերթով կրակելու հնարավորությունից և ունի տասը փամփուշտից ոչ ավելի տարողունակությամբ պահունակ (թմբուկ): Ողորկափող և ակոսափող կարճ փողով հրազենի փամփուշտների գնդակները չեն կարող ունենալ կարծր նյութերից բաղկացած միջնաձող:

Ծառայողական զենքի փամփուշտները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության ստանդարտներին»:

Նշված հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանվում են ծառայողական զենքին ներկայացվող տեխնիկական չափանիշները:

Անհրաժեշտ է նկատել, որ «Պահապան» ՍՊ ընկերության կողմից առաջարկվող MAKAROV mp-654K տեսակի զենքը վերը նշված հոդվածով սահմանված չափանիշներին չի համապատասխանում և չի կարող նույն հոդվածի ուժով համարվել ծառայողական զենք:

Հետևաբար, Ընկերությունը իրավաչափորեն մերժել է «Պահապան» ՍՊ ընկերության հայտը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Երանուհի Սարգսյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ-ի կողմից 06.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի Բողոքի վերաբերյալ 13.02.2019թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր).

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) հայտ է ներկայացրել «Պահապան» ՍՊԸ-ն:

Հրավերով նախատեսված ծառայության մատուցման համար պահանջվել են օրենքով սահմանված՝ պահանջվող լիցենզիայի (լիցենզիաների) տեսակը (տեսակները):

Հրավերի 2.5 կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝

2.5 Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառության մասին:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում անվտանգության և պահնորդական ծառայությունների մատուցված լինելը:

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն ենթակետով նախատեսված պահանջը.

2) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ նույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

3) «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին,

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

4) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:

Աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են ձեռքբերվող ծառայության հետևյալ հատկանիշները. «Պահակակետերի վերահսկողության տակ է գտնվում 46954.19 քմ կազմող շենք-շինություններ և 49836.15 քմ հողատարածք: Անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն ծառայողական զենքով՝ առանց հանգստյան և տոնական օրերի Կատարողը տարածքի անվտանգությունը և պահպանությունը պահակակետում պետք է ապահովի աշխատակցի պարտադիր ներկայությամբ՝ 24 ժամյա ռեժիմով (ներառյալ ոչ աշխատանքային և տոն օրերը): Ծառայությունը մատուցվելու է 4 տարբեր պահակակետերում: Աշխատակիցների ընտրությունը պետք է նախապես համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում և

ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով: Ծառայություն իրականացնող բոլոր պահնորդներին անհրաժեշտ է հանդերձավորել համապատասխան արտահագուստով (գարուն-ամառ, աշուն-ձմեռ): Աշխատակիցները պետք է լինեն 25-45 տարեկան: Աշխատակիցը պետք է ունենա ձեռքի լապտեր՝ գիշերային ժամերին շրջայցների համար նախատեսված և անհրաժեշտ լուսավորություն ապահովող, ռետինե մահակ և ծառայողական զենք, ինչի համար պետք է անցած լինի հատուկ ուսուցում և ունենա այն կրելու իրավունք,պետք է տիրապետի առաջին բուժօգնության կանոններին, տիրապետի տեսահսկման համակարգերի շահագործման կանոններին: Յուրաքանչյուր օր անհրաժեշտ է.

- իրականացնել հերթապահություն /ներառյալ տեսահսկման և հակահրդեհային ահազանգման համակարգերի միջոցով/,
- իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն,
- կանխել խոշոր նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,
- արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքում /հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն, խուլիգանական հարձակումներ և այլն/ կատարելով նաև անհրաժեշտ ահազանգեր, ինչպես նաև 3-5 րոպեի ընթացքում հատուկ նշանակության խմբեր ուղարկել պահպանվող օբյեկտ,
- արգելել կողմնակի անձանց մուտքը,
- անհրաժեշտության դեպքում ապահովել բուժաշխատողների անվտանգությունը,
- իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ,
- հետևել շենքի դիմահայաց ավտոկայանատեղիի սահմանված կարգի պահպանմանը,

ապահովել աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը /ներառյալ տեսահսկման համակարգերը /,

ամենօրյա շրջայց կատարել շենքի ներսում՝ աշխատանքի ավարտից հետո:

Հատուկ նշանակության խմբերի միջոցով իրականացնել շուրջօրյա ստուգայցեր պահպանվող տարածքի անվտանգությունը էլ ավելի հուսալի դարձնելու համար: Կատարողը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին:

Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են Կատարողի կողմից:

Գնային առաջարկը պետք է ներառի 4 պահակակետի ամսական վճարները»:

Հանձնաժողովը 22.01.2019թ. էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով «Պահապան» ՍՊԸ-ին ուղարկել է ծանուցում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պահապան» ՍՊԸ-ն դիմել է «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրել է Հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որոնցում նկատվել են հետևյալ թերությունները. կցված չեն զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունը»:

«ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ուղղված 22.01.2019թ. պատասխան գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ն հայտնել է.

««Պահապան» ՍՊԸ-ն 2019 թվականի հունվարի 10-ին կայացած «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքում ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Հրավերով սահմանված կարգով ներկայացվել են որակավորման փաստաթղթեր, որից հետո ձեր կողմից ներկայացվել է շտկման պահանջ՝ զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները ներկայացնելու վերաբերյալ, որոնք ներառված չեն հրավերով սահմանված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի շարքում: Հարկ ենք համարում նաև նշել, որ հրավերում նախատեսված պայմանագիրը ընդամենը նախագիծ է, և նախագծով առաջնորդվելը օրինաչափ չէ: Միևնույն ժամանակ, ինչ վերաբերում է հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի հավելված հանդիսացող տեխնիկական բնութագրի պահանջին, այն է՝ «անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն ծառայողական զենքով», ապա տեղեկացնում ենք, որ մեր ընկերության տիրապետման տակ են գտնվում ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ծառայողական զենք հանդիսացող «MAKAROV» mp-654K կարճ ակոսափող օդաճնշիչ զենքեր, էլեկտրոշոկեր, ռետինե մահակներ և այլն, որոնց ձեռքբերման և օգտագործման համար լիցենզիա և թույլտվություն անհրաժեշտ չեն: Ելնելով վերոգրյալից՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվում է երկկողմ կնքված պայմանագրի առկայության դեպքում իրականացնել պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ծառայություն. նշված ծառայությունը պատշաճ չիրականացնելու դեպքում կարող եք լուծարել պայմանագիրը»:

Հանձնաժողովը 24.01.2019թ. համակարգի միջոցով ներկայացված պատասխան ծանուցմամբ տեղեկացրել է Ընկերությանը, որ Հանձնաժողովն ուսումնասիրել է Աճուրդի մասնակցության Ընկերության որակավորման փաստաթղթերը, որոնցում նկատվել են հետևյալ թերությունները. շտկումն իրականացված չէ, ինչի արդյունքում Ընկերության հայտը՝ թիվ 1 չափաբաժնի մասով, մերժվել է:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը նշեց, որ «Պահապան» ՍՊԸ-ն, Հրավերով սահմանված պահանջին համապատասխան, սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է «մասնավոր պահնորդական գործունեության իրականացման» լիցենզիան: Սակայն, Հանձնաժողովն՝ ուսումնասիրելով Հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, արձանագրել է, որ հիշյալ փաստաթղթերում առկա չէ զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները՝ փաստաթղթեր, որոնք, «Պահապան» ՍՊԸ-ի հավաստմամբ, ներառված չեն Աճուրդի հրավերով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկում, ուստի և դրանք ներկայացնելու պահանջը իրավաչափ չէ և խտրական է, ինչից հետևում է, որ «Պահապան» ՍՊԸ-ն՝ նշված փաստաթղթերը Հանձնաժողովին ներկայացնելու պարտավորություն չուներ: Միևնույն ժամանակ, Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ պայմանագիր կնքվելու դեպքում «Պահապան» ՍՊԸ-ն պատրաստ է իրականացնել Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված՝ շուրջօրյա պահնորդական ծառայություն ծառայողական զենքով, և տեղեկացրեց, որ ունի դրա համար բոլոր միջոցները՝ Ընկերությանն են պատկանում ՀՀ օրենքով ծառայողական զենք հանդիսացող «MAKAROV» mp-654K կարճ ակոսափող օդաճնշիչ զենքեր, էլեկտրոշոկեր, ռետինե մահակներ և այլն:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի

- 7.10 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը՝համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել՝

- ա. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

- բ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

- գ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

- 7.16 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում

հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխա-տանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

- 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝

- 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրենց պարտականությունները կատարելիս պահնորդները (թիկնապահները) կարող են օգտագործել միայն պահնորդական կազմակերպության սեփականությունը համարվող կամ օրինական տիրապետման տակ գտնվող զենքը, հատուկ և տեխնիկական միջոցները:

-15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնավոր պահնորդական կազմակերպությունը պահնորդական ծառայություններ մատուցելու նպատակով զենք է ձեռք բերում և օգտագործում հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց համար՝ «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի՝

• 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

• 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք նախատեսված չեն նույն հոդվածով:

• 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում չեն հրապարակվել «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

- Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ի թիվս այլ պայմանների, սահմանվել են ձեռքբերվող ծառայության հետևյալ հատկանիշները. «Անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն ծառայողական զենքով (...): ... Աշխատակիցը պետք է ունենա... ռետինե մահակ և ծառայողական զենք, ինչի համար պետք է անցած լինի հատուկ ուսուցում և ունենա այն կրելու իրավունք(...)»:

- «Պահապան» ՍՊԸ-ն Հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է «մասնավոր պահնորդական գործունեության իրականացման» լիցենզիան:

- Հանձնաժողովը 22.01.2019թ. էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով «Պահապան» ՍՊԸ-ին ուղարկել է ծանուցում՝ նշելով, որ ուսումնասիրել է Հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որոնցում նկատվել են հետևյալ թերությունները. կցված չեն զենք կրելու թույլտվության լիցենզիան, աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները, և առաջարկել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունը:

- Հանձնաժողովը 24.01.2019թ. համակարգի միջոցով տեղեկացրել է Ընկերությանը, որ ուսումնասիրել է Աճուրդի մասնակցության Ընկերության որակավորման փաստաթղթերը, որոնցում շտկումն իրականացված չէ, ինչի արդյունքում Ընկերության հայտը մերժվել է:

- Հրավերի 2.5 կետով նախատեսված՝ մասնակցին ներկայացվող որակավորման չափանիշներով «Աշխատակիցը պետք է ունենա... ծառայողական զենք, ինչի համար պետք է անցած լինի հատուկ ուսուցում և ունենա այն կրելու իրավունք» պահանջ նախատեսված չէ:

- Հրավերով նախատեսված չէ աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները ներկայացնելու պահանջ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրում Պատվիրատուի կողմից սահմանվել են «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշիներին վերաբերող տվյալներ, այն է՝ «աշխատակիցը պետք է ունենա... ծառայողական զենք, ինչի համար պետք է անցած լինի հատուկ ուսուցում և ունենա այն կրելու իրավունք», մինչդեռ Հրավերի տեխնիկական բնութագրում կարող են սահմանվել բացառապես գնման ենթակա ծառայությունը նկարագրող հատկանիշներ,

- տվյալ դեպքում Հրավերի տեխնիկական բնութագրում նախատեսված՝ «աշխատակիցը պետք է ունենա... ծառայողական զենք, ինչի համար պետք է անցած լինի հատուկ ուսուցում և

ունենա այն կրելու իրավունք» պայմանը Հրավերով մասնակցին ներկայացվող որակավորման չափանիշներում նախատեսված չէ, ինչպես նաև Հրավերով նախատեսված չէ աշխատակիցների զենք կրելու թույլտվությունները ներկայացնելու պահանջ, հետևաբար նշված հիմքով Ընկերության հատը մերժելն անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Պահապան» ՍՊԸ-ն-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 06.02.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմկերպված «ՍԳԼ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- «Պահապան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում,
- «Պահապան» ՍՊԸ-ին ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ